ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանի՝ Թունիսի Հանրապետություն (Թունիս) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Ռաֆիկ Գրիգորյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Թունիսի Հանրապետություն (Թունիս), 2020թ. մարտի 1-ից 6-ը:

Հրավիրող կողմը՝ Անցումային արդարադատության միջազգային կենտրոն (ICTJ):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Ճշմարտություն, հաշվետվողականություն և ակտիվների վերականգնում. Ինչպե՞ս կարող է անցումային արդարադատությունը պայքարել կոռուպցիայի դեմ» խորագրով համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Համաժողովի ընթացքում քննարկվել են Հարավ-Հարավ համագործակցության ընդլայնմանը, հաշվետվողականության, ակտիվների վերականգնման և մարդու իրավունքների ոտնահարման և մասշտաբային կոռուպցիայի կանխարգելման ոլորտում շահագրգիռ կողմերի կարողությունների ամրապնդմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

«Ճշմարտություն, հաշվետվողականություն և ակտիվների վերականգնում. Ինչպե՞ս կարող է անցումային արդարադատությունը պայքարել կոռուպցիայի դեմ» խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանը 2020թ. մարտի 1-ից 6-ը գտնվել է Թունիսի Հանրապետությունում (Թունիս):

«Ճշմարտություն, հաշվետվողականություն և ակտիվների վերականգնում. Ինչպե՞ս կարող է անցումային արդարադատությունը պայքարել կոռուպցիայի դեմ» խորագրով համաժողովի նպատակներն են եղել.

1. Հնարավորություն ընձեռել Հարավային տարածաշրջանների քաղաքականություն մշակողներին և ակտիվիստներին փոխանակվելու և դասեր քաղելու անցումային արդարադատության միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մյուս մասնակիցների փորձից.

2. Համախմբել կոռուպցիայի դեմ պայքարի, ապօրինի ստացված ակտիվների վերականգնման, կոռուպցիայի և մարդու իրավունքների ոտնահարման անպատժելիության միջև կապի, ինչպես նաև ապօրինի ստացված ակտիվները փոխհատուցման ծրագրերի ֆինանսավորման համար կիրառելու ոլորտում փորձագետների ունեցած գիտելիքները.

3. Կոռուպցիան և ավտորիտար ռեժիմը վերջերս հաղթահարած երկրների քաղհասարակության կազմակերպություններին և քաղաքականություն մշակողներին տրամադրել տեխնիկական աջակցություն և համապարփակ գիտելիքներ այն մասին, թե ինչպես նրանք կարող են ստեղծել և գործարկել ճշմարտության հաստատման հանձնաժողովներ, իրականացնել վեթինգի, փոխհատուցումների, քրեական հետապնդման և ինստիտուցիոնալ բարեփոխումների հետ կապված միջոցառումներ, որոնք իրենց հերթին կարող են դրական ազդեցություն ունենալ մարդու իրավունքների խախտման կամ մասշտաբային կոռուպցիայի դեմ պայքարի վրա:

4. Հյուսիսային տարածաշրջանների քաղաքականություն մշակողներին, ակտիվիստներին և միջազգային հաստատություններին տրամադրել Հարավային տարածաշրջանների ունեցած գիտելիքները, փորձը և գաղափարները, որպեսզի նրանք կարողանան օգտագործել այդ գիտելիքները և հզորացնել իրենց պետական պաշտոնյաների, բանկերի, կորպորացիաների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կարողությունները կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում:

Համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանը հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալը համաժողովի մասնակիցներին ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և 2019թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած Դատահիրավական բարեփոխումների ռազմավարությամբ ամրագրված առաջնահերթություններն ու հիմնական ուղղությունները: Այս համատեքստում, ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալը նշել է, որ դատահիրավական բարեփոխումների շրջանակներում 2020 թվականի ընթացքում նախատեսվում է կիրառել անցումային արդարադատության գործիքակազմ և կառուցակարգեր, որոնք իրագործվելու են մարդու իրավունքների զանգվածային, պարբերական խախտումների վերաբերյալ փաստերի հավաքման և վերականգնման միջոցով: Այս կապակցությամբ, նախարարի տեղակալը նշել է, որ այս տարվա ընթացքում նախատեսվում է ձևավորել Փաստահավաք հանձնաժողով՝ 1991-2018թթ. ընթացքում Հայաստանում տեղի ունեցած խախտումների դեպքերի ուսումնասիրության և դրանց վերաբերյալ տեղեկությունների հավաքման համար:

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանը երկկողմանի հանդիպումները է ունեցել «Ճշմարտություն, հաշվետվողականություն և ակտիվների վերականգնում. Ինչպե՞ս կարող է անցումային արդարադատությունը պայքարել կոռուպցիայի դեմ» խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով Թունիս ժամանած Հարավային Աֆրիկայի, Քենիայի, Ֆիլիպինների, Գամբիայի և այլ պետություններ ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են առկա համագործակցության խորացմանն, ինչպես նաև երկկողմ ծրագրեր իրականացնելուն առնչվող հարցեր:

Հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանը հանդիպել է նաև Թունիսի Հանրապետության Դատական գործակալության, Գերագույն դատական խորհրդի և Կոռուպցիայի դեմ պայքարի պետական մարմնի ներկայացուցիչների հետ և քննարկել վերջիններիս փորձը

անցումային արդարադատության և դատական բարեփոխումների ոլորտում՝ Թունիսում 2011թ. տեղի ունեցած հեղափոխությունից հետո:

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ՝

X _____

Ռաֆիկ Գրիգորյան

10.03.2020թ.